

368.4:331.4

F-63

Պոլիտեխնիկական դպրոցի, միացե՛ք

ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ն. Ի. ԲԻԽՈՎՍՎԻ

== ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ==

ՈՒ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Փոխադրեց՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

368.4

F-63

Հրատարակություն

Հ.Ս.Խ.Հ. Սոցիալական Ապահովագրության Վարչության

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1926 p.

368.4

F-63
W

Պոլեմարներ բոլոր յեկրներ միացե՛ք

300
2640-ԲԻ

Ն. Ի. ԲԻԽՈՎՍԿԻ

ԲԱՆՎՈՐՈՒՇԻՆ ==
ՈՒ
== ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1003
1975
1251



Փոխադրեց՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակութիւն
Հ.Ս.Զ. Սոցիալական Ապահովագրութեան Վարչութիւն

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Շատ վաղուց ե անցել ու այլևս չի վերադառնալ այն ժամանակը, յերբ վոր գործարաններում միայն տղամարդիկ եյին աշխատում:

Բանվորների ստացած աշխատավարձը չէր բավականացնում իրենց ընտանիքները կերակրելու և հազար ու մի ծախսերը հոգալու համար, այդ պատճառով ել նրանց կանայք ու քույրերը ստիպված են լինում թողնել իրենց ընտանեկան ոչախները և հազարներով ու հարյուր հազարներով մտնում են գործարանները, արհեստանոցներն ու գրասենյակները, տղամարդու հետ կողք-կողքի կանգնում են դաղգյահների ու վաճառասեղանների առաջ, նստում են գրասենյակներում և կատարում են ամեն տեսակի ծանր ու դժվար աշխատանքներ:

Ճիշտ ե, այսպիսով կինը գործարանում տղամարդուն հավասար իրավունքներ ստացավ, բայց այն ել չպիտի մոռանալ, վոր գործարան մտնելով կինը իր կյանքն ու առողջությունը ճիշտ նույնպիսի վտանգների ու զրկանքների տակ դրեց, ինչպես վոր տղամարդը:

Տղամարդ բանվորի նման, կինն ել կարող ե հիվանդանալ ու զրկվել աշխատավարձից, մանավանդ, վոր կնոջ կազմվածքը ավելի թույլ ե քան տղամարդունը և ավելի շուտ կարող ե հիվանդանալ քան տղամարդը, վորի կազ-

Գրատ. № 369 բ. Տիրամ 3000. Պատվ. № 2433.
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերևան:

մվածքը ավելի ամուր ե և ավելի ընդունակ ծանր աշխատանք կատարելու:

Տղամարդու նման կլինն ել կարող ե գործարանում փաստվել — հաշմանդամ դատնալ և ամբողջ կյանքում մընալ կադ կամ կոնատ (առանց ձեռքի), աշխատանքի անընդունակ: Գործարանում նա կարող ե զրկվել իր կյանքից և նրա ընտանիքը, նրա յերեխաները կը մնան անտեր անտիրական, առանց ապրուստի միջոցների:

Տղամարդու նման կլինն ել կարող ե գործարանում մաշել իր յերիտատարդությունը, իր ուժերը, ծերության հասակում նա կարող ե զրկվել աշխատելու ընդունակությունից, ուրեմն և կզրկվի ապրելու միջոցներից, վորովհետև բանվոր կնոջ ապրուստի միակ աղբյուրը իր աշխատավարձն ե:

Տղամարդու նման կլին բանվորն ել կարող ե զրկվել իր գործից, դատնալ գործադուրկ և այսպիսով նա կը զրկվի այն աշխատավարձից, վորով թե ինքն եր ապրում, թե իր ընտանիքը, իր յերեխաներին եր կերակրում:

Տղամարդ բանվորի և կին բանվորի տարբերությունը միայն այն ե, վոր կինը ավելի շատ ե այս մեր ասած գժբախտությունների ու անհաջողությունների մեջ ընկնում քան թե տղամարդը, կինը ավելի շատ ե գործադուրկ մնում, հիվանդանում և զրկվում իր աշխատավարձից քան թե տղամարդը. իսկ դրա պատճառն ել այն ե, վոր մի կողմից շատ տեսակ աշխատանքներ փաստակար են կնոջ համար և մյուս կողմից ել այն, վոր կինը հղիանում ե, մայր ե դառնում, վորը նույնպես նրա գործազրկության ու աշխատավարձից զրկվելու պատճառ ե լինում:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Կան այնպիսի աշխատանքներ, արդյունաբերության այնպիսի ճյուղեր, վորոնք այնքան փաստակար են կնոջ համար, մանավանդ նրա հղիության ժամանակ, վոր բժիշկները սիզդակի արգելում են հղի կանանց այդպիսի տեղեր աշխատել: Այդ փաստակար ձեռնարկություններին են պատկանում, որինակ նրանք, վորտեղ բանվորը ստիպված ե գործ ունենալ կապարի (արձիճի) հետ, ձենապակու և կավագործության գործարանները, ապարանները և այլն:

Կապարը (արձիճը) մարդուս համար չափազանց վընասակար թույն ե: Նա փոշիացած դրությամբ մանում ե մեր մարմնի մեջ շնչելու ժամանակ, թքի, հետ, կերակուր ուտելիս և նույնիսկ մարդու մարմնի ծախտիկների միջով:

Այդ թույնը մեծ փասս ե տալիս վոջ միայն բանվորուհուն, այլ և մանում ե նրա ազագա զավակի մարմնի մեջ ու թունավորում ե նրան դեռ իր մոր արգանդում: Մի գերմանացի գիտնական՝ Ռեյն անունով, հաշվել ե, վոր միայն իրենց սովորական տնտեսությամբ, զբաղվող 100 կնոջից 43-ը կամ յերեխան մեռած են ծնում, կամ վրժում են (ժամանակից շատ առաջ ընկնում ե չզարգացած յերեխան) կամ ծնում են ժամանակից շուտ: Իսկ այն կանայք, վոր աշխատում են արձիճի արդյունաբերության մեջ, զբանցից 100-ից 133-ը յերեխան ծնում են մեռած կամ վրժում են: Ուրիշ խոսքով կապարի արտադրության մեջ աշխատող ամեն մի մայր ամենաքիչը մի յերեխա յե կորցնում: Իսկ այն յերեխաները, վոր ծնվում են, չնայած նրանց մայրը կապարի արտադրության մեջ ե աշխատում, այդ յերեխաներն ել արդեն առաջուց կարելի յե ասել, վոր կամ կը մեռնեն դեռ մանուկ հասա-

կում և կամ յեթե ապրեցին՝ թույլ ու հիվանդոտ կլինեին և դժբաղդ կյանք կունենան:

Մի ուրիշ գիտնական — պրոֆեսոր Ուիվերը, ուսումնասիրել է Վենզրիայի հաղձապակու արտադրութեան մեջ աշխատող բանվորների վիճակը և գտել է, վոր բանվորական ընտանիքների յերեխաներից շատ-շատերը անընդունակ են ապրելու, հիվանդ են ջրգողութեամբ, վոսկրախտով և ուրիշ շատ հիվանդութեաններով: Պրոֆեսոր Ուիվերը քննել է այս մասսայական հիվանդութեանների պատճառները և գտել է, վոր այդ յերեխաները թունավորված են կապարով (արճիճով) կամ դեռ մոր արգանդում (զավակատանը) կամ մոր կաթի միջոցով: Քննութեանները ցույց են տվել, վոր մոր կաթի մեջ ել լինում է կապարի փոշի:

Ուրեմն տեսանք, վոր թե մոր և թե մանկան համար շատ վնաս է, վոր մայրը աշխատի կապարի կամ ուրիշ վտանգավոր արտադրութեան մեջ: Բայց միայն այդ չի ընդհանրապես հղիութեան վերջին ամիսներին ամեն տեսակ աշխատանք վնասակար է: Նույն գիտնականները կշռել են զանազան մայրերի նորածին ժանուկներին և պարզվել է, վոր այն մայրերը, վորոնք մինչև հղիութեան վերջին ուրը աշխատում են գործարանում, նրանց յերեխաները կըշռում են մոտ 2,900 գրամ. այն մայրերը, վորոնք ծննդաբերութեանից 10 որ առաջ ազատվում են աշխատանքից, նրանց յերեխան կշռում է մոտ 3,014 գրամ. 20 որ հանգստացողներինը 3,175 գրամ, 30 որ հանգստացողներինը 3,225 գրամ, իսկ ուլքեր 40 որ առաջ ազատվում են աշխատանքից, ունենում են 3,325 գրամ կշռող յերեխա: (400 գրամը 1 ֆունտ է):

Հղի ժամանակ կինը շատ զգուշ պիտի լինի իր առողջութեան համար: Նա պետք է լավ կերակրվի, ծանր աշխատանքից չհոգնի, շուտ-շուտ պետք է հանգստանա,

թեթև գրոսանքներ պիտի կատարի և այլն: Այդ ժամանակ նա պետք է պաշտպանի վոշ միայն իրեն, այլ և իր զավակին, վորը մոր արգանդում կերակրվում է միմիայն մոր հյութերով ու արյունով:

Սակայն բուրժուական պետութեան մեջ բանվորուհին փոխանակ հանգստանալու, լավ սնունդ առնելու, շատ անգամ ստիպված է լինում կիսաքաղց կյանք անցկացնել, կամ չոր հացով ապրել, ստիպված է լինում ծանր աշխատանք կատարել, ծանր իրեր շալակել, այնքան, վոր բուրդովին ու ժաթափի է լինում: Զարմանալի չէ ուրեմն, վոր այս պայմաններում բանվորուհին հղիութեան ժամանակ այնքան շուտ-շուտ հիվանդանում է կանացի հիվանդութեաններով, իսկ ծննդաբերութեանից հետո կամ նրանց յերեխաները մեռած են ծնվում և կամ ծնվելուց հետո յերկար չեն ապրում:

Բայց, ասենք թե, հասավ շատ վաղուց սպասված որը, կատարվեց մոր սրտի փափազը և նա ծնեց մի յերեխա, առողջ յերեխա, կարճ է մայրն ասել, վոր ինքը յերջանիկ է, ի հարկե, նա յերջանիկ է, վոր առողջ զավակ ունեցավ, բայց այդ յերջանկութեանն էլ թունավորվում է, այդ գուտ մայրական յերջանկութեանն էլ նրան նոր հոգսերի, նոր տանջանքների մեջ է գցում. ինչո՞ւ, վորովհետև նա բանվորուհի յե: Նրա յերեխային հարկավոր է խնամել, հսկել, հետևել, բայց նա ժամանակ ու հնարավորութեան չունի դրա համար: Յերեխային ողի չափ անհրաժեշտ է մայրական կաթը, բայց մայրը ժամանակ չունի նրան կերակրելու, նա պետք է գնա գործարան, աշխատանքի, վորովհետև, յեթե չգնա, կզրկվի աշխատավարձից ու ինքն էլ, իր յերեխան էլ սովից կմեռնեն: Յե՞վ անհա. մայրը թողնում իր թանկագին զավակին տատի կամ հարևանի կնոջ մոտ ու դնում գործարան: Յերեխան փոխանակ մոր կաթի — ստանում է կո-

վի կաթ, վորը չի կարողանում մարսել նրա նուրբ ու թույլ ստամոքսը, ստանում է խաշիլ, (շփոթ) ծամած հաց և այլն, վոր լաց չլինի և իրեն պահողների զահլան չըտանի: Իսկ ինչո՞ւ յե լաց լինում խեղճ յերեխան. վորովհետև փոխանակ մոր կաթի իրեն տալիս են այդ շփոթն ու ծծուկը (ամզուկ):

Ահա այս պայմաններում մեռնում են հազարավոր յերեխաներ, մեռնում են հարյուր հազարներով մարդկային թանկագին կյանքեր:

Ի՞նչն է պատճառը, վոր այսպես միլիոններով մեռնում են այն յերեխաները, վորոնցից շատ շատերը գուցե մեծանալուց հետո մարդկությանը բողոք ու յերջանկություն կբերեյին: Իրա պատճառը միմիայն այն է, վոր կարիքը նրանց մայրերին գործարան է քշում, յերեխաները զրկվում են մոր կաթից- մայրական քնքուշ ու հոգատար խնամքից, իսկ անխնամ յերեխան, պարզ է, վոր յերկար կյանք ունենալ չի կարող:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՅԳԱՐԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բանվոր դասակարգը և նրա ղեկավարները չեյին կարող ուշադրություն չգարձնել մայր-բանվորուհու այս անտանելի դրության վրա:

Յե՛վ ահա ամեն տեղ բանվորները պահանջում են թեթևանցել մայր-բանվորուհու դրությունը: Բանվորական կուսակցություններն ամեն տեղ ստիպում են իրենց տերերին ու բուրժուական կառավարություններին, վոր մայրության ու մանկության պաշտպանության որենքներ հրատարակվեն: Նրանք պահանջում են հղի և ծնողական բանվորուհուն ազատել աշխատանքից և ազատել այնքան ժամանակ, վոր նա կարողանա կազդուրվել հղիության ու

ծննդաբերության ժամանակ քաշած ցավերից ու կարողանա կազդուրել և իր նորածին մանկանը:

Բորը յերկրներում բանվորները պահանջում եյին տերերից, վոր նրանք ազատեն մայր բանվորուհիներին՝ յերեխաներին ծիծ տալու համար: Պահանջում եյին, վոր գործարաններում մսուրներ կազմակերպվեն, վորպեսզի բանվորուհիները իրենց աշխատանքի ժամերին իրենց յերեխաներին անդավորեն այդ մսուրներում:

Բայց բուրժուական կառավարիչների սրտին դուր չեյին զալիս այդ պահանջները: Խոսելիս նրանք շատ գեղեցիկ ճառերով գովում եյին կանանց, իրենց «ագնիվ» զգացմունքներն եյին հայտնում «գեղեցիկ սեռի» մասին, բայց հենց վոր բանվորների պահանջը դիպչում էր կապիտալիստների զրպանին, նրանք խոկույն մոռանում եյին իրենց ճառերը, այդ «քաղցր» ու «բարի», այդ «հրաշալի» զգացմունքները վերանում, կորչում եյին ծխի նման և հրապարակ եյին գալիս բանտերը, վոստիկաններն ու ժանդարմները, աքսորն ու ճնշումները, վորոնցով սովորաբար բուրժուական պատասխան էր տալիս բանվորների պահանջներին:

Սակայն բանվոր դասակարգը իր այդ արդար պահանջներից չէր հրաժարվում: Բանտը, աքսորը, հազար ու մի հալածանքները չեյին սարսափեցնում նրան: Բազմաթիվ զոհեր տալով, իրենց արյան գնով բանվորներին տեղ-տեղ և ժամանակ առ ժամանակ հաջողվում էր ստիպել բուրժուական իրարին, վոր բանվորական ծրագրի գոնե մի մասը իրականացնեն կյանքում:

Միակ յերկիրը մեր Խորհրդային Հանրապետությունների Միությունն է, վորտեղ կյանքում իրականացրած են այն ամենը, ինչ վոր պահանջում է բանվոր դասակարգը մայրության և մանկության պաշտպանության հարցում:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՂԱՇՏՂԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՂԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեր Աշխատանքի Որենագիրքը, վոր պաշտպանում է ամբողջ բանվոր դասակարգի շահերը, առանձնապես մեծ խնամքով պաշտպանում է մայր-բանվորուհու շահերը:

Ամենից առաջ Աշխատանքի Որենագիրքը խիստ կերպով արգելում է հղի կնոջը, ծննդականին կամ ծծի յերեխա ունեցողին պարտադիր աշխատանքի ուղարկել, ինչքան էլ այդ աշխատանքը կարևոր ու անհետաձգելի լինի. (որինակ՝ պատերազմի ժամանակ զիրքեր փորելը և այլն.): Որենքը արգելում է հարկազիր աշխատանքի ուղարկել և այն կանանց, վորոնք իրենց հետ ունեն մինչև 8 տարեկան յերեխա (յեթե բացի մորից ուրիշ վոչ վոր չկա ընտանիքում, վոր յերեխային խնամի):

Այսուհետև Որենագիրքը խստորեն արգելում է կանանց աշխատանքի ընդունել այն ձեռնարկություններում, վորոնք Միությունների ու Աշխատանքի Ժողովրդական կոմսարիատի կողմից փաստակար յեն համարվում կնոջ առողջության համար:

Ճիշտ այդպես էլ, առանց Միությունների ու Աշխատանքի Ժողովրդական կոմսարիատի հատուկ թույլտվության՝ Որենագիրքը թույլ չի տալիս կնոջը գիշերային աշխատանքների ընդունել, վորովհետև գիշերվա աշխատանքները շատ վատ են ազդում բանվորուհու առողջության վրա:

Իսկ այն կանանց, վորոնք հղի յեն կամ ծծի յերեխա ունեն, Որենագիրքը միանգամայն արգելում է գիշերային կամ սրտաժամյա աշխատանքներ կատարել: Նույնիսկ Միություններն ու Աշխատանքի Ժող. կոմսարիատն էլ իրավունք չունեն թույլ տալու, վոր հղի կամ ծծկեր յերեխա ունեցող կինը արտաժամյա կամ գիշերային աշխատանք կատարի:

Նույն այդ Աշխատանքի Որենագիրքը ամենախիստ կերպով արգելում է հղի կնոջը, առանց իր համաձայնության, գործուղել (գործով ուղարկել) իր աշխատանքի տեղից մի ուրիշ տեղ, մի ուրիշ քաղաք կամ գյուղ: Ամեն մի բանվորուհի կամ ծառայող կին, իր հղիության 5-րդ ամսից հետո իրավունք ունի հրաժարվելու այդպիսի գործուղումից և վոչ գործատեղը վոչ հիմնարկությունը իրավունք չունեն այդ բանի համար պատժել կամ մեղադրել այդ կնոջը (հեռացնել գործից, ոտճիկ չտալ և այլն):

ՀՂԻ ՅԵՎ ԾՆՆԴԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

Բացի այդ, Աշխատանքի Որենագիրքը պահանջում է, վոր հղի բանվորուհուն կամ ծառայող կնոջը արձակուրդ տրվի: Համաձայն որենքի բանվորուհին արձակուրդ է ստանում 8 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթ հետո (ուրեմն մոտ չորս ամիս), իսկ ծառայող կինը արձակուրդ է ստանում 6 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 6 բաբաթ հետո (ուրեմն մոտ յերեք ամիս): Կան այնպիսի ծառայող կանայք, վորոնք բանվորուհիների նման հղիության գեպքում արձակուրդ են ստանում 16 շաբաթ. (այդպիսի ծառայող կանանց ցուցակը տես այս գրքույկի 22 յերեսում.):

Իսկ յերբ բանվորուհին կամ ծառայող կինը ծննդաբերությունից հետո արդեն հանգստացել է, արձակուրդը լրացել է և աշխատանքի յե անցել, այդ ժամանակ էլ որենքը նրան իրավունք է տալիս յերեք ու կես ժամը մի անգամ կես ժամով թողնել աշխատանքը և զնալ յերեխային կերակրելու: Այդ կես ժամերի համար հիմնարկությունը կամ գործարանը իրավունք չունի նրա ոտճիկից

կտրելու, նա իր աշխատավարձը լրիվ ստանում է, իսկ այդ ընդմիջումները նրա աշխատանքի ժամերի մեջ են մտնում:

Չեանարկությունը պարտաւոր չի բանվորուհուն կամ ծառայող կնոջը վճարելու այն 16 շաբաթվա կամ 12 շաբաթվա համար, վոր բանվորուհին կամ ծառայող կինը չեն աշխատել: Աշխատանքի Որենսգրքը պարտավորեցնում է ապահովագրական գանձարկղներին՝ վճարել բանվորուհուն կամ ծառայողին այն ամբողջ ժամանակի ուժիկը, վոր կինը հղիութեան պատճառով արձակուրդ է ստացել: Յեւ արձակուրդ ստացած հղի կինը իր աշխատավարձը լրիվ ստանում է ապահովագրական գանձարկղից այն չափով, ինչ չափով վոր նա ստանում էր գործարանից կամ հիմնութեանից արձակուրդ գնալու ժամանակ:

Առաջ, հին ժամանակները, շատ ու շատ անգամ հղի բանվորուհին անքուն գիշերներ էր անցկացնում: Նրան տանջում էր այն միտքը, թե ինչպէս պիտի ապրի հղիութեան ժամանակ կամ ծննդաբերութեանից հետո: Այդ միտքը շատ ու շատ արցունք էր թափում հղի բանվորուհու աչքերից: Այդ ժամանակ հղի կինը վոչ միայն չէր թողնում իր աշխատանքը, վոչ միայն չէր գնում հանգստանալու, այլ ընդհակառակը, ավելի շատ էր աշխատում, իր հղիութեանը ծածկում էր գործատերից կամ վարպետից, ավելի շատ էր լարում իր ուժերը, վորպեսզի մի յերկու ոտքի էլ ավելի աշխատի, ծննդաբերութեան ժամանակ իր շտապ ու անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Չե վոր նա պետք է մանկաբաժնուհուն կամ տատնորը վճարեր, պետք է նորածնի համար կտրեղեն ու հազար ու մի մանր մուկներ բաներ ստներ: Յեւ անա, այս պատճառով էլ բանվորուհին չէր դադարում աշխատել, ծածկում էր իր հղիութեանը և դազդյանի առաջ կանգնած աշխատում էր մինչև վերջին օրը, քիչ էր մնում թե հենց այդտեղ, գործարանումն էլ ծնի յերեսան:

ՀՂԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏՆԵՐ

Այժմ, Խորհրդային իշխանութեան ժամանակ, բանվորուհին կարիք չունի իր առողջութեանը վնասելու և ուժից վեր աշխատելու: Այժմ նա կարող է արձակուրդ ստանալ, գնալ հանգիստ նստել և իր սովորական աշխատավարձը ստանալ ապահովագրական գանձարկղից:

Իրա համար միայն հարկավոր է, վոր նա գնա ամբուլատորիա, կամ կոնսուլտացիա և բժշկից տեղեկանք ստանա, թե յերբ է սպասվում ծննդաբերութեանը: Այնուհետև տեղեկանքը պիտի վավերացնի (հաստատի) թաղային բժշկական վերահսկիչ հանձնաժողովը: Այս անելուց հետո բանվորուհին ծննդաբերութեանից 8 շաբաթ առաջ (ծառայողը 6 շաբաթ առաջ) համարձակ կերպով կարող է հայտնել հիմնարկութեանը, կամ գրասենյակին, վոր արձակուրդ է գնալու: Այդտեղ նա տեղեկանք կստանա իր վերջին ամսվա աշխատավարձի մասին, այդ տեղեկանքը բժշկի վկայականի հետ կներկայացնի ապահովագրական գանձարկղին և այնուհետև կանոնավոր կերպով, յերկու շաբաթը կամ ամիսը մի անգամ նա լիովին կստանա իր աշխատավարձը գանձարկղից:

ԲԺՇԿԱԿԱՆ ՅԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ

ՁՐԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Ծննդկան բանվորուհուն փողով ոգնելը բավական չէ. նրան հարկավոր է և բժշկական ոգնութեան, ծննդաբերութեան ժամանակ հարկավոր է մանկաբարձուհի (ակուշերկա): Յեթե նրա ուժիկով բժիշկ ու մանկաբարձուհի հրավիրեն, յերևի իրեն ապրելու համար բոն չի մնալ:

Ահա հենց այդ պատճառով էլ շատ քիչ էր պատահում, վոր բանվորուհիներն ու բանվորները կանայք դիմեն բժշկի կամ մանկաբարձուհու ոգնութեանը, այլ համարյա միշտ էլ յոլա էլին գնում տատամայրներով, իսկ յերբեմն

ել դիմում եյին իրենց հարեան կանանց: Այդ տատամայր-
ները և հարեանները շատ անգամ բանվորի բնասնիքը
գժբախտութեան մեջ եյին գցում, վորովհետև նրանց
տգիտութեան պատճառով մեռնում եյին և մայրը և նո-
րածինը:

Այժմ այդպես չե, այժմ բանվորուհին կամ բանվո-
րի կինը կարիք չունի տատամայրներին դիմելու: Նա կա-
րող և դիմել հիվանդանոցներին կից ծննդաբերական
բաժնին: Այդտեղ պարտավոր են նրանց բնորոշել առանց
հերթի և ձրի բժշկական ու մանկաբարձական ոգնութիւն
տալ: Այդտեղ նա կարող ե պառկել 10-15 օր, մինչև վոր
բոլորովին կառողջանա, և այդ օրերին նրան վոչ միայն
ձրի բժշկում են, այլ և ուտելիքը, խմելիքը, գեղերը,
ամեն ինչ ձրի յեն տալիս:

ՆՈՐԱՄԻՆՆԵՐԻ ՈՒՅԻ ՋԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՆՊԱՍԵ

Աշխատանքի օրենսգիրքը հոգ ե տանում նաև յերե-
խային անհրաժեշտ սպիտակեղենների, փաթաթաշորերի
և այլ մանր մուներ ծախսերի համար: Ապահովագրական
գանձարկղները պարտավոր են ծննդաբերութիւնից
մի ամիս առաջ հղի կնոջը տալ վորոշ նպաստ (բացի ու-
ճիկից) վորպեսզի մայրը յերեխայի համար անհրաժեշտ
պատրաստութիւններ տեսնի: Ընդհանրապէս, այդ նպաստը
այնքան ել շատ չե, բայց բանվորի համար շատ մեծ
օգնութիւն ե: Յերեխայի նախնական ծախսերի համար
տրվում ե այդ տեղի միջին աշխատավարձի 50% -ի չափով:
Մեզ մոտ միջին աշխատավարձը առայժմ համարվում ե
48 ուրբլի, վորը յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ փոխ-
վում ե: Ուրեմն հղի բանվորուհին կամ ծառայող կինը,
կամ բանվոր— ծառայողի կինը ծննդաբերութիւնից մեկ
ամիս առաջ կարող ե ապահովագրական գանձարկղից 24
ուրբլի ստանալ: Իրա համար նա պետք ե բժշկից վկա-

յական տանի, վոր իսկապես ծննդաբերութեանը մի ա-
միս ե ֆուցել: Իսկ յեթե պատահի, վոր կինը յերկու յե-
րեխա բերի, և յերկրորդ յերեխան կենդանի ֆու, այն
ժամանակ նա նորից 24 ուրբլի կստանա մյուս յերեխա-
յի ծախսերը հոգալու համար:

Բայց ասենք թե արձակուրդի 8 շաբաթը անցավ
(ծառայող կնոջ համար 6 շաբաթ) և հակառակի պես յե-
րեխան չի ծնվում. բժիշկը սխալվել և, ժամանակը ճիշտ
չի վորոշել: Ի՞նչ պիտի անի բանվորուհին, պիտի զրկվի
իր աշխատավարձից, թե պիտի գնա աշխատելու: Սորհրդ-
դային իշխանութիւնը, վոր ամենախիստ կերպով պաշա-
պանում ե մոր և մանկան շահերը, նրանց առողջութիւն-
նը, չի կարող թույլ տալ, վոր այդ գրութեամբ կինը
գնա աշխատելու: Այդպիսի գեպքերում ապահովագրական
գանձարկղը պարտավոր ե վճարել բանվորուհու աշխատա-
վարձը լիովին: Միևնույն ժամանակ այդ ավելորդ արձա-
կուրդը ծննդաբերութիւնից հետո ունեցած արձակուրդից
չի դուրս գալիս: Ծննդաբերութիւնից հետո բանվորու-
հին ելի օգտվում ե իր օրինավոր 8 շաբաթվա արձակուր-
դից, վորպեսզի կազմուրվի, մի լավ առողջանա, նոր գոր-
ծի անցնի:

Յեվ ճիշտն ել այս ե. ի՞նչու պիտի բանվորուհին
տուժի բժշկի սխալներէ համար:

ԿՆՆԳԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Ահա վերջապես հասավ այն օրը, վորին վաղուց
սպասում եր բանվորուհին. նա պառկեց, յերեխա ունե-
ցավ: Ի՞նչ պիտի անի վորպեսզի գանձարկղը վճարի նրան
ֆուցած 8 շաբաթվա (ծառայող կնոջը 6 շաբաթվա) աշ-
խատավարձը: Իրա համար նա շատ անելիք ել չունի:
Հարկավոր ե միայն տեղական «Զուգ»-ից յերեխայի
ծննդեան վկայականը վերցնել, ուրիշ վոչինչ:

Այդ վկայականով մայր բանվորուհուն վոչ միայն իր լրիվ աշխատավարձը կտան, այլև բացի այդ, ամեն ամիս նպաստ կտան յերեխային կերակրելու համար, մինչև վոր յերեխան իննը ամսական դառնա:

Յերեխային կերակրելու նպաստը հավասար է այն գումարի քառորդին, վոր մայրը ստացել էր ծնունդից մեկ ամիս առաջ՝ յերեխային հարկավոր իրերը գնելու համար: Ասեցինք, վոր մեզ մոտ այս նպաստը 24 ուրբլի յե ուրեմն յերեխային կերակրելու համար մայրը ամսական կստանա ելի 6 ուրբլի: Այդ նպաստը նույնպես տալիս է աջահովազրական գանձարկը, ամեն ամիսը մի անգամ: Այդ նպաստը ստանալու համար հարկավոր է ամեն անգամ անդեկանք ներկայացնել գանձավիզին, վոր յերեխան կենդանի յե: Տեղեկանքը կարելի յե ստանալ անդկոմից, գործարկոմից, անկոմից կամ միլիցիայից: Այդ նպաստը տրվում է և և այն մայրերին, վորոնք իրենց կրծքով չեն կերակրում յերեխային: Յերկվորյակներ (յերկուսը միասին) ծնելու դեպքում նպաստն էլ յերկուսի համար է տրվում. (ուրեմն 12 ուրբլի ամսական):

Բայց կարող է պատահել և այսպես: Ծննդաբերությունը բարդացավ, դժվարացավ, մայրը իր 8 (կամ 6) շաբաթ արձակուրդից հետո էլ գեռ չի առողջացել և բրձիչկները արգելում են նրան աշխատանքի գնալ:

Ի՞նչ պիտի անի բանվորուհին:

Որենքը այստեղ էլ ոգնության է հասնում կնոջը: Ապահովագրական գանձարկը պարտավոր է նրա լրիվ ոտճիկը վճարել, մինչև վոր նա բոլորովին կառողջանա, կամ բժիշկները կգանեն, վոր նա հաշմանդամ է դարձել, այլևս աշխատել չի կարող: Այդ ժամանակ միայն դադարում են նրան աշխատավարձ տալ և անց են կացնում հաշմանդամների հաշվին ու տալիս են հաշմանդամի թոշակ:

1003
1915

Բայց, վորպեսզի գանձարկը իմանա, վոր բանվորուհին իսկապես հիվանդության պատճառով չի գնացել աշխատելու, հիվանդը պետք է ներկայացնի «հիվանդության թերթիկ»:

Այդ թերթիկի վրա բժիշկը պիտի հաստատի, վոր իսկապես նա աշխատել չի կարող, հիվանդ է: Մի տեղեկանք էլ պետք է ներկայացնել հիմնարկությունից, վոր նա հիվանդության ժամանակ չի աշխատել: Գանձարկը պարտավոր է վճարել միայն բաց թողած բանվորական որերի աշխատավարձը:

ԳՂԻ ՅԵՎ ԾՆՆԴԿԱՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԿԱՆԱՆՑ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Խորհրդային իշխանությունը բանվորուհու մասին հոգ է տանում վոչ միայն այն ժամանակ, յերբ նա աշխատում է գործարանում կամ հիմնարկության մեջ, այլ և այն ժամանակ, յերբ նա գործազուրկ է:

Գործազուրկ կանայք, վոր գործազրկության նպաստ են ստանում, ազատվում են աշխատանքի բորսա ներկայանալու պարտականությունից 12 շաբաթով (6 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 6 շաբաթ հետո): Այդ 12 շաբաթվա ընթացքում նրանք գործազուրկները ամենաբարձր խմբի չափի նպաստ են ստանում. (մեզ մոտ ամենաբարձր խմբի նպաստը 14 ու. 40 կոպեկ է): Այն էլ պիտի ասել, վոր այդ 12 շաբաթը չի հաշվվում այն ժամանակվա մեջ, վոր գործազուրկ կինը նպաստ պիտի ստանար, նրա նպաստ ստանալու ժամանակը յերկարացվում է 12 շաբաթով:

Բացի այդ, այսպիսի գործազուրկները իրավունք ունեն ձրի բժշկական և մանրէաբանական ոգնություն ըստանալու: Իրավունք ունեն նաև յերեխայի նախնական ծախսերը հոգալու:



տներն ստանալու, այն չափով, ինչ չափով վոր, ասացինք, ստանում են աշխատող բանվորուհիները:

Հղիության և ծննդաբերության նպաստները ստանալու համար գործազուրկ կանայք նույն բժշկական վկայականները պիտի ներկայացնեն, ինչ վոր ներկայացնում են աշխատող բանվորուհիները:

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐԸ:

Սակայն, բացի բանվորուհիներից ու գործազուրկներից, կան և շատ ուրիշ կանայք, վորոնք նույնպես բանվորական շրջանին են պատկարում, այսպես որինակ՝ գործազուրկ բանվորների կանայք, աշխատանքի հաշմանդամների կանայք, կամ նրանք, վորոնք առաջ աշխատում եյին, բայց այժմ հաշմանդամ են դարձել: Խորհրդային իշխանութունը այսպիսի կանանց ել չի մոռացել, սրանց մասին ել ե մտածել:

Որենքով բանվորների կանայք, ինչպես և նպաստ կամ կենսաթոշակ ստացող գործազուրկների կամ հաշմանդամների կանայք, նույնպես իրավունք ունեն ասպահովագրական գանձարկղից յերեխայի շորերի, սպիտակեղենի և կերակրելու նպաստ ստանալու: Նրանք իրավունք ունեն նաև ձրի բժշկական ու մանկաբարձական ոգնություն ստանալու: Ծիշա այդպես ել նույն նպաստը և ոգնությունը ստանալու իրավունք ունեն և այն կանայք, վորոնք աշխատանքի հաշմանդամ են և թոշակ կամ ապրուստի միջոց են ստանում հաշմանդամների տանը: Միայն նրանց ծննդաբերությունից առաջ և հետո սրվող նպաստը չի տրվում, վորովհետև փաստորեն նրանք աշխատավարձ չեն կորցնում:

Իացի դրանից յերեխայի ծախսերը հոգալու և կերակրելու համար նպաստ ստանալու ինչպես և ձրի բժշկական ոգնություն ստանալու իրավունք ունեն կարմիր բանակի մեջ կանչված բանվորների ու ծառայողների կանայք, յեթե ծնունդը կատարվել ե նրանց ամուսնուն զինվորական ծառայության կանչելուց հետո մինչև մեկ ամիս անցնելը: Այդ նույն նպաստներն ու բժշկական ոգնությունը ստանում են և նպաստ ստացող գործազուրկների կանայք:

Այս կանայք, գանձարկղից նպաստ ստանալու համար բացի բժշկական վկայականից և յերեխայի ծննդականից պետք ե ներկայացնեն և մի փաստաթուղթ, վոր ցույց տա, իսկապես նրանք նպաստ ստանալու իրավունք ունեն: (Ամուսնու հաշվեգրքույկը, ծառայության վկայականը և այլն): Նույն վկայականը պիտի ներկայացնել և ծննդաբերական տուն կամ հիվանդանոց զնալու ժամանակ:

ՈՒՐԻԾ ՏԵՍԱԿԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐԵՐԻՆ

Այս բոլորով չի բավականանում Խորհրդային իշխանությունը. նա ուրիշ շատ միջոցներ ել ե ձեռք առնում, աշխատավոր կանանց ավելի ոգնած լինելու համար: Ուրիշ ինչ ե անում Խորհրդային իշխանությունը. այն գործարաններում, վորտեղ շատ կանայք են աշխատում, կազմակերպում ե մասերներ, վորտեղ բանվորուհիները կարող են թողնել իրենց յերեխաներին աշխատանքի ժամերին, հղի կանանց և մայրերի համար բժիշկական խորհրդատվություն և կազմակերպում, վորտեղ բժիշկները հեռուում են նրանց յերեխաների առողջությանը և խորհուրդներ են տալիս թե ինչպես պիտի խնամել յերեխային:

կազմակերպում է մանկական խոհանոցներ, վորտեղից բան-
վորները յերեխաներին կաթ և այլ մթերքներ և տրվում,
կազմակերպում է մանկատներ ու մանկապարտեզներ, վոր-
տեղ կրթում, դաստիարակում են բանվորների յերեխա-
ներին և այլն:

ՅԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Ահա թե ինչպես է Խորհրդային իշխանութիւնը հոգ
տանում մայր-բանվորուհու մասին, բացի այն, վոր նա
պաշտպանում է նրան, ինչպես ընդհանրապես բանվորներին:
Մինչդեռ բուրժուական յերկրների կառավարիչները դա-
տարկ ճառեր են ասում կանանց իրավունքների մասին,
մայր-կնոջը և սիրած-կնոջը գովաբանում են իրենց վո-
տանավորներում ու արձակ գրվածքներում, բայց կանանց
զբութիւնը լավացնելու համար մատը մատին չեն խփում,
այստեղ «կոշտ ու վայրենի» Խորհրդային իշխանութիւնը
վոչ միայն կնոջը տղամարդուն հավասար քաղաքական
իրավունքներ է տվել այլ և հրատարակել է մի շարք
որենքներ, մոր և մանկակ պաշտպանութեան մասին,
այնպիսի որենքներ, վոր վոչ մի բուրժուական յերկրում
ընդունված չեն:

Ճիշտ է, զեռ ամեն բան արված չէ, յերեխայի ծախ-
սերը հոգալու և կերակրելու համար տրվող նպաստները
մեծ չեն, զեռ ամեն տեղ բացված չեն մսուրներ, ման-
կատներ, մանկապարտեզներ ու բժշկական խորհրդակայան-
ներ, բայց դրա պատճառը վոչ թե այն է, վոր Խորհրդ-
դային իշխանութիւնը չի ցանկանում, այլ այն, վոր մեր
յերկիրը և մեր ժողովրդական անտեսութիւնը զեռ վտաքի
չեն կանգնել ցարական և քաղաքացիական կռիվների ավեր-
մունքներից հետո:

Բայց յերբ վոր մեզ կհաջողվի վտաքի կանգնեցնել մեր
անտեսութիւնը, այն ժամանակ, պարզ է, վոր մոր և ման-
կան պաշտպանութեան գործը շատ ավելի կլավանա:

Իրա համար էլ բանվորուհիները և ընդհանրապես բո-
լոր աշխատավոր կանայք պետք է ոգնեն Խորհրդային իշ-
խանութեանը վերականգնել յերկրի անտեսութիւնը և կազ-
մակերպել մոր և մանկան պաշտպանութեան գործը:

Բանվորուհիները առանձնապես պիտի ոգնեն տպա-
հովազրական գանձարկղներին—բանվորներին և բանվորու-
հիներին ապահովելու գործում:

Բանվորուհիները պիտի պահանջ դնեն իրենց միու-
թիւններում, վոր գանձարկղների պատգամավորական կոն-
ֆերենցիաներում ու կոմիտեներում բացի տղամարդկանցից
-կանայք էլ ընտրվեն:

Այլ կոնֆերենցիաների համար պատգամավոր պետք է
ընտրել ամենագործուհեյա, ազնիվ ու նվիրված կուսուհիս-
տին կամ անկուսակցականին—վորոնք հայտնի չեն իրենց
նվիրվածութեամբ՝ բանվոր դասակարգին:

Ապահովագրական գանձարկղները բանվորական կար-
միր խաչերն են, վորոնք ոգնութեան են գալիս պրոլետա-
րական հսկա բանակին, զինվորներին, յերբ նրանք գուրս
են գալիս աշխատանքից հիվանդութեան, հաշմանդամու-
թեան, գործազրկութեան մայրութեան և այլ դեպքերում:

Յեվ ահա, բանվորական բանակի կարմիր խաչի գնդե-
րում կլինը իր արժանի տեղը պիտի գրավի հենց առաջին
շարքերում:

Յ Ո Ւ Յ Ա Կ

այն առիւտներ, գրադուներ, վորսեղից կանայք Քիզիբա-
կան աւիաասնէ սահող կանանց պես իրավուներ ունեն
կուրդ սահալու Տ արքաք ծննդաբերութեանցից առաջ յեվ
Տ արքաք հետ

1) Հեռախոսի ցանցում աշխատող կանայք (телефонистка-
ները), 2) Հեռագրատան կին պաշտոնյաները (телеграфис-
тка-ներ), 4) Մանկաբարձուհիները (акушерка), 4) գթու-
թյան քույրերը, 5) Մասաժով գրադվող կանայք (массажис-
тка), 6) Հոգեբուժական հիվանդանոցների ու նրանց
բաժանմունքների կառավարչուհիները (надрзирательницы),
բժշկուհիներն ու բուժակուհիները (фельдшерицы), 7) Գյու-
ղական շրջիկ ծառայութեան մեջ յեղող բժշկուհիներն ու
բուժակուհիները, վորոնք հիվանդին ոգնութեան են ցույց
տայիս հենց հիվանդի տանը, առաջընթաց գնդերի, վիրաբու-
ժական հիվանդանոցների ու նրանց բաժանմունքների,
ծննդաբերական հիմնարկութեանների բժշկուհիներն ու բու-
ժակուհիները, 8) Խորհրդային ամբուլատորիայի ատամնա-
բուժուհիները, 9) Մանկաների մանկապարտեզների, ման-
կական գաղութների, արատավոր յերեխաների տները ղե-
կավարուհիները, գյուղական դպրոցների վարժուհիները,
I և II աստիճանի գիշերօթիկ դպրոցների դաստիարակչու-
հիները, ֆիզկուլտուրայի հրահանգչուհիները և այն կա-
նայք, վորոնք կուլտ-կրթական աշխատանք են տանում
ուղղիչ տներում: 10) Դրամայի, ոպերայի, բալետի և
կրկեսի (ցիրկ) գերասանուհիները, վորոնք բեմ են դուրս
գալիս, 11) Այն բոլոր կանայք, վորոնք մշտապես գիշե-
րային աշխատանքով են գրադված 12) Այն կանայք, վորոնք
տեսչի կամ հրահանգչի պաշտոն են տանում և իրենց աշ-
խատանքի ժամանակ ստիպված են շարունակ շրջել մի
տեղից մյուս տեղը: 13) Աստիտենտ կանայք, լաբարատորի-
այում աշխատող կանայք, գեֆեկտորները, պուլտրան-
տները և այն. 14) Մեքենագրուհիները 15) Այն կին բու-

ժակուհիները, գթութեան քույրերը և լաբարատորիայում
աշխատող կանայք, վորոնք աշխատում են բենտգենյան
առանձնասենյակներում և իրենց բանվորական որվա ըն-
թացքում ամբողջապես անմիջական գործ են ունենում բեն-
տգենյան տերապևտիկական աշխատանքի հետ. 16) Այն
բժշկուհիները, բուժակուհիները և գթութեան քույրերը,
վորոնց աշխատանքն է պայքարել ժանտախտի, խողերայի,
ծաղիկ, հիվանդութեան և բժավոր տիֆի դեմ և աշխատան-
քի ընթացքում անմիջական շփումն են ունենում հիվանդ-
ների հետ, 17) վոստ-հեռագրատան գրասենյակներում
աշխատող այն կանայք, վորոնք տեսակների յեն բաժանում
(сортировщицы), 18) Խորհրդային բաշխման կայաններում
աշխատող-վաճառող կանայք:



« Ազգային գրադարան



NL0212728

44.060

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.